Երրորդ ճանապարհն ևս դաշտիս հիւսիսային եզրէն կանցնի, Ջեռքեան, Մօլլա-Սիւլէյման, Վաղարշակերտ, Խաչլու, Ամատ, Աշխալի, Երանոս հայ գիւղերու միջէն, կը դառնայ ի հարաւ, կը մտնէ Գարա-քիլիսէ 9 ժամուայ մէջ։

Մեր ճանապարհը Զըլկանի գիւղից մինչև Դամղխան Շեռեանայ ձախ ափն ի վայր էր, Դամղխանից մինչև Գարաքիլիսէ քօր գետի աջ ափն ի վեր է. այժմ մենք անցանք քօր գետից, մեր ճանապարհն ուղղուեցաւ արևելեան հարաւ տակաւ առ տակաւ մօտեցաւ Մուրատի աջ ափին, անցաւ Եօնճալու, Ղազի գիւղերու միջից, Ջիրոյ և Եբմալ գիւղերու հարաւից, բռնեց Մուրատի աջ ափը, Ջրիվեր ըստ Ջրի բացած ընթացքին ոլոր մոլոր մինչև Ներքին Դաշլի-չայ պարսկաբնակ գիւղն, Ջրի հանդէպ թողուցինք Սօֆեան՝ Կեառկեառ (Խոռ-Էր), Կօլասոր պարսկաբնակ գիւղերը, ձախ կողմերնիս Սինակ լեռներու հարաւային ստորոտներն և տասնի չափ քրդաբնակ գիւղեր։

Գարա-քիլիսէից մինչև Դաշլիչայ 5 ժամու չափ կը տևէ ճանապարհն։

Խճուղին Դաշլի-չայից յարևելս կը բարձրանայ, տակաւ առ տակաւ Մուրատից կը հեռանայ, մէկ ժամ հեռաւորութեան աջ կողմը կը թողու Ալիկոռ պարսկաբնակ գիւղն և դարձեալ տակաւ առ տակաւ Նպատայ հիւսիսային ստորոտը դանուած կամուրջին[1] կը մօտենայ, կամուրջը աջ կողմ թողլով երեք ժամ ևս Զիրաւայ դաշտից անցնելով Դիատին կը հասնի, ուստից յարևելս ուղղուելով Խիեկայ կետուկով Պայազիտ կուղղուի, կանցնի Պարսկաստան։

---

1. Այս կամուրջը միայն վանքի համար շինուած է. ներկայ դարնան ջուրը յորդած՝ կամուրջը քանդած է։